ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Փախստականների կրթական իրավունքներին նվիրված միջազգային փորձագիտական հանդիպման վերաբերյալ

1. ***Անունը, Ազգանունը***

   Լուսինե Առաքելյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը***

   ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***

   Իսպանիայի Թագավորություն (Բարսելոնա),

   2018 թվականի դեկտեմբերի 12-14-ը:

4. ***Հրավիրող կողմը***

   Կրթության հարցերով ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենի տեղակալ Ստեֆանիա Ջիանին

5. ***Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)***

   Հայաստանը հրավիրված էր հատուկ կարգավիճակով՝ փախստականների կրթական իրավունքներին նվիրված միջազգային փորձագիտական հանդիպմանը մասնակցելու

6. ***Քննարկված թեմաները***

   Դեկտեմբերի 12-ից 14-ը Բարսելոնայում տեղի ունեցավ փախստականների կրթական իրավունքներին նվիրված միջազգային փորձագիտական քննարկում, որտեղ Հայաստանը հանդես եկավ զեկույցով, որպես կրթական համակարգերում փախստականների ինտեգրման դրական փորձ գրանցած երկիր:

   Միջոցառման համակազմակերպիչներն էին ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը, Բարսելոնայի քաղաքապետարանը և Կատալոնիայի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնը: Զեկույցներով հանդես եկան Դանիայի, Հորդանանի, Սուդանի, Չադի, Հունաստանի, Իրաքի, Նոր Զելանդիայի, Պորտուգալիայի, Քաթարի ներկայացուցիչները:

   Հանդիպումն անցկացվում էր երեք թեմատիկ պանելային և Փախստականների կրթական իրավունքին նվիրված քաղաքական փաստաթղթի նախագծի մշակմանը նվիրված երեք զուգահեռ ընթացող խմբային քննարկումների միջոցով (Panel Discussion 1: Country-specific and common challenges faced by education national systems in integrating refugees populations; Panel Discussion 2: Good

practices and promising measures taken by countries; Panel Discussion 3: Policy levers and areas for targeted policy support; Parallel Break Out Session: 3 parallel groups discussing the text of the draft Policy Statement): Հայաստանը հանդես է եկել առաջին և երկրորդ պանելային քննարկումների ժամանակ:

7. ***Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը***

Բաց քննարկմանը հրավիրված երկրների ներկայացուցիչներն ու փորձագետները ներկայացրին իրենց երկրներում գրանցած դրական փորձը, ինչպես նաև այն հիմնախնդիրները, որոնք ունեն հրատապ լուծման կարիք:

Միջոցառման երկու օրվա ընթացքում կազմակերպվեցին առանձին քննարկումներ: Հայաստանում փախստականների ինտեգրման հարցերի վերաբերյալ ներկայացվեցին մի շարք հիմնահարցեր, որոնք գտել են լուծման մեխանիզմներ: Օրինակ՝ Հայաստանը ապահովում է փախստական անձանց կրթության շարունակականությունը՝ ընդհատած ժամանակահատվածից, ինչպես նաև օրենքում նախատեսվող փոփոխություններով ենթադրվում է ճանաչել այլ երկրների կողմից տրված որակավորման վերաբերյալ կրթական փաստաթղթերը:

8. ***Գործուղվողը***

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Լուսինե Առաքելյան

9. ***Ստորագրությունը, ամսաթիվը***

Լուսինե Առաքելյան

25/12/2018